**ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N 2**

2025 թվականի նոյեմբերի 28-ին թվականին կնքված N **ԿԾԿԾԻԳ-ԳՀԱՊՁԲ-25/37** ծածկագրով պայմանագրի

ք. Երևան «30» 04 2026թ.

ՀՀ ԿԳՄՍՆ «Կրթական ծրագրերի կենտրոն» ԾԻԳ ՊՀ-ն ի դեմս տնօրենի պաշտոնակատար՝ Գ. Հովհաննիսյանի, ով գործում է ՀՀ ԿԳՄՍՆ «Կրթական ծրագրերի կենտրոն» ԾԻԳ ՊՀ-ի կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Գնորդ), մի կողմից, և «ԳԱԳԻԿ ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ԲԱԲԿԵՆԻ» ԱՁ-ն, ի դեմս տնօրեն՝ Գ. Կարապետյանի (այսուհետ՝ Վաճառող), մյուս կողմից, երկուսը միասին այսուհետ՝ Կողմեր, ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական օրենսդրությամբ, գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ, հիմք ընդունելով 2025 թվականի նոյեմբերի 28-ին կնքված N ԿԾԿԾԻԳ-ԳՀԱՊՁԲ-25/37 ապրանքի մատակարարման պայմանագրի (այսուհետև՝ Պայմանագիր) 8.5 և 8.8 կետերը, փոխադարձ համաձայնությամբ կնքեցին սույն համաձայնագիրը հետևյալի մասին.

## 1. *Համաձայնագրի առարկան*

Հետագա համագործակցության նպատակով Կողմերը որոշեցին՝

1.1 Պայմանագրի Հավելված թիվ 1-ով սահմանված «ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ-ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*»-ի «Ժամկետը» սյունակով նշված «Պայմանագրի ուժի մեջ մտնելուց հետո մինչև 2026 թվականի ապրիլի 30-ը ներառյալ, պահպանելով ՀՀ կառավարության 04/05/17թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման կարգի» 21-րդ կետի 1-ին ենթակետի «ը» պարբերությամբ սահմանված պահանջները» բառերը փոփոխել և շարադրել նոր խմբագրությամբ հետևյալ կերպ. «Պայմանագրի ուժի մեջ մտնելուց հետո մինչև 2026 թվականի մայիսի 25-ը ներառյալ, պահպանելով ՀՀ կառավարության 04/05/17թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման կարգի» 21-րդ կետի 1-ին ենթակետի «ը» պարբերությամբ սահմանված պահանջները»:

## 2. Այլ պայմաններ

2.1 Սույն համաձայնագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը:

2.2 Համաձայնագրում չնշված՝ Կողմերի Պայմանագրով ստանձնած իրավունքներն ու պարտականությունները թողնվում են անփոփոխ:

2.3 Սույն համաձայնագիրը կազմված 1 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

## 3. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

**ԳՆՈՐԴ**

ՀՀ ԿԳՄՍՆ «Կրթական ծրագրերի կենտրոն» ԾԻԳ ՊՀ
Հասցե՝ ՀՀ, ք. Երևան, Ս. Վրացյան 73
Բանկ՝ ՀՀ ՖՆ կենտրոնական գանձապետարան
Հ/Հ՝ 900011061943
ՀՎՀՀ՝ 02550991

Տնօրենի պաշտոնակատար՝

-------------------------------- Գ. Հովհաննիսյան
(ստորագրություն)
Կ.Տ.

**ՎԱՃԱՌՈՂ**

ԳԱԳԻԿ ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ԲԱԲԿԵՆԻ Ա/Ձ
Հասցե՝ ք. Երևան Հաղթանակի փ. 146
Բանկ՝ «Էվոկաբանկ» ՓԲԸ
Հ/Հ՝ 1660030261262900
ՀՎՀՀ՝ 32428274

ԳԱԳԻԿ ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ԲԱԲԿԵՆԻ Ա/Ձ՝

-------------------------------- Գ. Կարապետյան
(ստորագրություն)
Կ.Տ.